

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**08 մայիսի 2019թ.**  
**ք. Երևան**

**N 33-Ա**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՐՏԱԿԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ  
ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ  
ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ.

1) 2019 թվականի հունիսի 9-ի տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահի և քարտուղարի պաշտոնները Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև բաշխվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշմամբ հաստատված «Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնները ըստ ընտրական տեղամասերի բաշխման կարգի» 5-րդ կետով սահմանված կարգով,

2) Արտահերթ ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովներում հանձնաժողովի նախագահների և քարտուղարների պաշտոններն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝

Իմ քայլը դաշինք՝ 9 -ական,

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 3 -ական

«Լուսավոր Հայաստան» կուսակցություն՝ 2 -ական

ա. Արտահերթ ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնները ըստ ընտրական տեղամասերի, «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների միջև համապատասխանաբար բաշխվել են՝

Համայնքի անվանումը	Բնակավայր	ՏԸՀ	Հանձնաժողովի նախագահ	Հանձնաժողովի քարտուղար
Սիս		11/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Ապագա		14/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Նորակերտ		14/2	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Նորակերտ		14/3	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Վարդանաշեն		15/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Շենավան		22/3	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Քարածոր		22/4	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Լեռնավան		22/5	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Գորայք	Գորայք (նախկին)	34/1	ԼՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Գորայք	Ծղուկ (նախկին)	34/2	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Գորայք	Սառնակունք (նախկին)	34/3	ԻՄ ՔԱՅԼԸ	ԼՀԿ
Գորայք	Սպանդարյան (նախկին)	34/4	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Ազատամուտ		37/1	ԼՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Ազատամուտ		37/2	ԻՄ ՔԱՅԼԸ	ԼՀԿ

2. Սույն որոշման 1-ին կետի 2-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են 2019 թվականի մայիսի 20-ից մինչև 22-ը՝ մինչև ժամը 18.00-ն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. Մ ու կ ու չ յ ա ն**